

## Կորոնավիրուս (COVID-19)

Աղետների հեկանքների մեղմանն ուղղված օգնություն ներգաղթյալների համար ՀՏՀ

**Ի՞նչ է իրենից ներկայացնում աղետների հեկանքների մեղմանն ուղղված օգնության ծրագիրը:**

COVID-19-ի բռնկման պայմաններում, Կալիֆորնիա նահանգը տրամադրում է աղետների դեպքում միանվագ օգնություն չփաստաթղթավորված չափահաս ներգաղթյալներին, որոնք իրավունք չունեն այլ տեսակի օգնություն, ներառյալ Կորոնավիրուսի հետևանքների մեղմանն ուղղված աջակցության, օգնության և տնտեսական անվտանգության մասին օրենքի (Coronavirus Aid, Relief, and Economic Security - CARES) համաձայն, ինչպես նաև իրենց ներգաղթային կարգավիճակի պատճառով՝ համաճարակի հետևանքով գործազրկության նպաստներ ստանալու: Ակնկալվում է, որ նահանգի կողմից այս ֆինանսավորումը կհասնի մոտավորապես 150,000 չփաստաթղթավորված չափահասների:

Կալիֆորնիա նահանգի Սոցիալական ծառայությունների վարչությունը (California Department of Social Services) ընտրել է ներգաղթյալներին սպասարկող տասներկու ոչ առևտրային կազմակերպություն, որոնք կօգնեն իրենց տարածաշրջանում անհատներին դիմել և ստանալ աղետների հեկանքների մեղմանն ուղղված օգնությունը: Չփաստաթղթավորված իրավասու չափահասը կարող է ստանալ 500 ԱՄՆ դոլարի չափով ուղղակի օգնություն՝ 1,000 ԱՄՆ դոլար մեկ տնային տնտեսության համար առավելագույն աջակցությամբ:

**Ե՞րբ հասանելի կլինի աղետների հեկանքների մեղմանն ուղղված օգնությունը:**

Անհատները կարող են ներկայացնել հայտադիմում 2020թ. մայիսի 18-ից: Աջակցությունը կտրամադրվի մինչև ֆինանսավորման սպառվելը կամ առնվազն մինչև 2020թ. հունիսի 30-ը: Հայտադիմումները կմշակվեն ըստ ստացման հերթականության: Դիմումատուները կարող են ստանալ աջակցություն միայն իրենց բնակության վայրին ամրագրված կազմակերպությունից (կազմակերպություններից):

**Խնդրում ենք նկատի ունենալ.**

- Ֆինանսավորումն սահմանափակ է, և աղետների մեղմանն ուղղված օգնությունն ու աջակցությունը չեն երաշխավորվում:
- Մինչև մայիսի 18-ը ոչ առևտրային կազմակերպությունները ֆիզիկական անձանց օգնություն չեն ցուցաբերելու: Անհատները չպետք է ժամանակից շուտ դիմեն ոչ առևտրային կազմակերպություններին՝ աղետների մեղմանն ուղղված օգնություն ստանալու համար:

## **Ո՞վ իրավունք ունի օգտվել աղետների հետևանքների մեղմանն ուղղված օգնությունից:**

Իրավասու չափահաս անձինք պետք է ի վիճակի լինեք տեղեկություններ տրամադրել այն մասին, որ նրանք (1) չփաստաթղթավորված չափահաս են (18 տարեկանից բարձր անձ), (2) իրավասու չեն օգտվելու COVID-19-ի դաշնային օգնությունից, ինչպիսիք են՝ հարկային խթանող վճարներ (CARES Act) կամ համաճարակի գործազրկության նպաստներ, և (3) COVID-19-ի արդյունքում դժվարություններ են ունեցել:

**Եթե ինչ-որ մեկը ստանա աղետների մեղմանն ուղղված այդ օգնությունը, արդյո՞ք դա կազդի նրա գրին քարտ ստանալու (կարգավիճակը ճշգրտելու) կամ ԱՄՆ քաղաքացի դառնալու իրավասության վրա: Արդյո՞ք աղետների մեղմանն ուղղված այդ օգնությունն ստանալով՝ անհատը համարվում է պետական հոգածության վրա գտնվող անձ:**

Աղետների հետևանքների մեղմանն ուղղված այս օգնությունը ոչ անհրաժեշտության սկզբունքով տրամադրվող և մեկանգամյա օգնություն է: Դաշնային կառավարությունը չի թվարկում այս օգնությունը, որպես հանրային նպաստ պետական հոգածության վրա գտնվող անձանց համար: Սակայն USCIS-ը չի հրապարակել այդ օգնությանը վերաբերյալ հստակ ցուցումներ:

Եթե կան հարցեր ներգաղթյալի կարգավիճակի և այս օգնության ծրագրի վերաբերյալ, խնդրում ենք խորհրդակցեք ձեր ներգաղթի հարցերով փաստաբանի հետ: Լրացուցիչ տեղեկություններ, ներառյալ անվճար և էժան ներգաղթի ծառայություններ մատուցողների ցանկը, հասանելի են վեբ կայքի նորացված էջում՝ [Guide for Immigrant Californians](#):

**Արդյո՞ք այն անձնական տեղեկությունները, որը տրամադրվում են ոչ առևտրային կազմակերպություններին աղետների հետևանքների մեղմանն ուղղված օգնությունը ստանալու համար, պաշտպանված են:**

Տեղեկատվությունը, որը տրամադրում է ոչ առևտրային կազմակերպություններին, կօգտագործվի միայն անհատի իրավասությունը հաստատելու և աղետների հետևանքների մեղմանն ուղղված օգնություն ցուցաբերելու համար: Ոչ առևտրային կազմակերպությունները կհամօգտագործվեն ընդհանուր ժողովրդագրական տեղեկատվություն (օրինակ՝ տարիքը, սեռը, նախընտրելի լեզուն և այլն) Կալիֆորնիա նահանգի դիմումատուների մասին, սակայն ոչ մի անձնական տվյալ (օրինակ՝ անունը, հասցեն և այլն) որևէ պետական հաստատության չեն փոխանցվի:

**Ի՞նչպես կարող է անձը դիմել աղետների հետևանքների մեղմանն ուղղված այս օգնությունն ստանալու համար:**

CDSS-ը հրապարակել է ոչ առևտրային կազմակերպությունների ցանկը, որոնք ընտրվել են Կալիֆոռնիայի տարբեր վարչաշրջաններում աղետների հետևանքների մեղմանն ուղղված օգնություն ցուցաբերելու համար՝

<https://cdss.ca.gov/inforesources/immigration/covid-19-drai>:

Այս օգնության համար դիմող անհատները պետք է կապ հաստատեն իրենց վարչաշրջանում գրանցված ոչ առևտրային կազմակերպության հետ ոչ շուտ, քան մայիսի 18-ը: Շահագրգիռ դիմումնատուները պետք է ուղղակիորեն կապ հաստատեն իրենց վարչաշրջանում գրանցված կազմակերպության հետ՝ տեղեկանալու օգնության հասանելիության մասին: Ոչ առևտրային կազմակերպությունը կազակցի անհատներին հայտադիմումների ներկայացման գործընթացում, կհաստատի նրանց օգնություն ստանալու իրավունքը և կտա վճարային քարտ հաստատված դիմատուներին: Հայտադիմումները կմշակվեն ըստ ստացման հերթականության:

Ֆինանսավորումն սահմանափակ է, և աղետների մեղմանն ուղղված օգնությունն ու աջակցությունը չեն երաշխավորվում:

**Մեկ տնային տնտեսության հաշվով քանի՞ մարդ կարող է ստանալ աղետների հետևանքների մեղմանն ուղղված այդ օգնությունը:**

Առավելագույնն երկու չափահաս անձ մեկ տնային տնտեսության հաշվով կարող է հավակնել այդ օգնությանը՝ 1,000 ԱՄՆ դոլար ընդհանուր գումարի չափով: Տնային տնտեսության անդամ են համարվում անհատներ, ովքեր միասին բնակվում են, գնումներ են կատարում և սնունդ են պատրաստում:

**Ինչպե՞ս կարող են իրավասու անհատներն ստանալ աղետների հետևանքների մեղմանն ուղղված այս օգնությունը:**

Եթե անհատն իրավասու է ճանաչվել, և նրա հայտադիմումը հավանության է արժանացել, ոչ առևտրային կազմակերպությունը, որը օգնել է նրան հայտադիմումը ներկայացնել, լրացուցիչ տեղեկություններ կտրամադրի այն մասին, թե ինչպես նա կստանա իր վճարային քարտը՝ կա՛մ քարտն անձամբ վերցնելով, կա՛մ այն ստանալ փոստով:

**Որքա՞ն ժամանակ էս ունեմ աղետների հետևանքների մեղմանն ուղղված այս օգնությունը ստանալու համար:**

Հայտադիմումները կմշակվեն ըստ ստացման հերթականության: 75 մլն ԱՄՆ դոլար ուղղակի օգնության տեսքով բաշխվելու է հաստատված հայտադիմումների հիման

վրա սկսած 2020թ. մայիսի 18-ից, մինչև ֆինանսավորման ֆոնդի սպառելը, կամ մինչև 2020թ. հունիսի 30-ը: Հաշվի առնելով այն տնտեսական դժվարությունները, որոնց հետ առերեսվում են չփաստաթղթավորված չափահասները COVID-19-ի պատճառով, աղետների հետևանքների մեղմանն ուղղված այս օգնությունը կարող է սպառվել շատ կարճ ժամանակահատվածում:

**Եթե ես չեմ կարող դիմել աղետի հետևանքների մեղմանն ուղղված այս օգնության համար, կա՞ն արդյոք այլ կազմակերպություններ, որոնք կարող են օգնել ինձ:**

California philanthropy և Grantmakers Concerned with Immigrants and Refugees (GCIR) կազմակերպությունների համագործակցության արդյունքում կյանքի է կոչվել Կալիֆորնիայի Ներգաղթյալների կենսունակության հիմնադրամը (California Immigrant Resilience Fund), որը ձգտում է հավաքել 50 միլիոն ԱՄՆ դոլար՝ չփաստաթղթավորված կալիֆորնիացիներին և նրանց ընտանիքներին դրամական օգնություն ցուցաբերելու համար, որոնք իրավասու չեն COVID-19 դաշնային օգնության ծրագրերից և նահանգի անվտանգության ցանցից օգտվելու համար: Կենսունակության հիմնադրամը՝ դա առանձին, սակայն լրացնող գործունեություն է, որը բաշխում է մասնավոր նվիրատվություններ՝ համաճարակի պայմաններում տնտեսական դժվարությունների հաղթահարման գործում չփաստաթղթավորված կալիֆորնիացիներին օգնություն ցուցաբերելու համար: Աղետների ժամանակ կենսունակության հիմնադրամի օգնությունը բաշխող կազմակերպությունների ցանկին ծանոթանալու համար այցելեք [www.immigrantfundca.org/](http://www.immigrantfundca.org/) վեբ կայքը:

**Որտեղի՞ց կարող եմ լրացուցիչ տեղեկություններ ստանալ այլ հանրային ծառայությունների և ծրագրերի մասին, որոնց ես կարող եմ հավակնել COVID-19 համաճարակի ընթացքում:**

Կալիֆորնիայի ներգաղթյալների ծառայությունների և ծրագրերի վերաբերյալ օգտակար տեղեկություններ ստանալու համար այցելեք [Guide for Immigrant Californians](#) կայքը, որը ներառում է տեղեկություններ աշխատատեղերի, աշխատավարձի և նպաստների, ինչպես նաև փոքր բիզնեսի և բնակարանային աջակցության մասին: Այցելեք [www.covid19.ca.gov](http://www.covid19.ca.gov) և սեղմեք «Ուղեցույց ներգաղթած կալիֆորնիացիներ»-ի վրա: